ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

25-ը դեկտեմբերի 2020թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՌԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ Ա. Ասատրյան /ԳԱՊ/,
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՌԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Գ. Ուիստյան,
ՀՀ ՋՈՒ ՌՎ ՀՎ և Վ ծառայության 1-ին բաժնի պետ, գնդապետ Ա. Առաքելյան,
ՀՀ ՋՈՒ ՌՎ ՀՎ և Վ ծառայության 1-ին բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Կարապետյան:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Տերյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ. Տերյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ
2	«Մոսէսքո» ՍՊԸ
3	«Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ
4	«Մաժէվ» ՍՊԸ
5	«Ժակ և Գոռ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ. Տերյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ մասնակիցների կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ի: «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է «Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 205 լ-ոց տարաներով», այնինչ ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է «Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով, «Ժակ և Գոռ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում 3-րդ և 4-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված են ապրանքների ՏՊ-ներ, այնինչ հրավերով նախատեսված են ԳՈՍՏ-եր: Քանի որ վերոնշյալ ընթացակարգի հրավերում նշված է, որ «*եթե մրցույթի ժամանակ ներկայացվում է ՏՊ-ով ապրանք, ապա պետք է ներկայացվի նաև նշված ՏՊ-ի կրկնօրինակը*», ուստի անհրաժեշտ է ներկայացնել նաև առաջարկված ապրանքների համապատասխան ՏՊ-ների կրկնօրինակները, «Մաժէվ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում 5-րդ և 6-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում համապատասխանաբար նշված է «ՏՊ 2389-007-04551273-2016 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ» և «ՏՊ 19.20.29-008-04551273-2017 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ»: Անհրաժեշտ է կոնկրետ նշել ՏՊ-ները, բացառելով այլընտրանքային մեկնաբանությունները՝ «կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ» բառերը: Վերոնշյալ ընթացակարգի հրավերով նախատեսվածից տարբերվող ՏՊ-ներ ներկայացնելու դեպքում, անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց կրկնօրինակները: Ուիստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 25.12.2020թ ծանուցել մասնակիցներին

ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները և նիստը շարունակվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Տերյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 5 մասնակից.

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Նախահաշվ. գումարը	Ընտրված կազմակերպության			Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների		
					անվանումը	գինը		անվանումները	գինը	
						առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով		առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Շարժիչի յուղեր /Բ3Վ/	կգ	800	10160000				«Մոսէքսը» ՍՊԸ	5957600	7149120
2	Շարժիչի յուղեր /10W40/	կգ	15000	18600000				«Մոսէքսը» ՍՊԸ	16350000	19620000
								«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ	18500000	22200000
3	Շարժիչի յուղեր /Մ-10Դմ/	կգ	20000	24960000				«Մոսէքսը» ՍՊԸ	21340000	25608000
								«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ	20900000	25080000
								«Ժակ և Գոռ» ՍՊԸ	21900000	26280000
4	Շարժիչի յուղեր /ՄՏ-16Պ/	կգ	25000	31200000				«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ	28750000	34500000
								«Ժակ և Գոռ» ՍՊԸ	27375000	32850000
5	Հակակոռոզիոն արտադրանք /Cuprum Remover FOAM 210ml/	լիտր	428,4	11470410				«Մաժէվ» ՍՊԸ	10710000	12852000
								«Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ	10924200	13109040
6	Հակակոռոզիոն յուղեր /Universal Oil PRO 210ml/	լիտր	428,4	13170729.6				«Մաժէվ» ՍՊԸ	12852000	15422400
								«Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ	13001940	15602328

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/, բացառությամբ «Մոսէքսը» ՍՊԸ 4-րդ չափաբաժնով ներկայացված գնային առաջարկի, որտեղ արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչների հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գնին, ուստի այդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը գնահատող հանձնաժողովի որոշմամբ մերժվեց:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/1» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, գնահատող հանձնաժողովի կողմից հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, գների նվազեցման նպատակով 08.01.2021թ. բավարար գնահատված և վերոնշյալ չափաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած մասնակցին ծանուցվել է 14.01.2021թ բանակցությունների վարման վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակիցները ներկայացել են բանակցություններին: Բանակցությունների արդյունքում «Մոսէքսը» ՍՊԸ նվազեցրել է 3-րդ չափաբաժնով ներկայացրած գնային առաջարկը սահմանելով 24 960 000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, «Մաժէվ» ՍՊԸ նվազեցրել է 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով առաջարկված գնային առաջարկները սահմանելով համապատասխանաբար 11 470 410 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն և 13 170 729 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Մնացած գնային առաջարկները մնացել են անփոփոխ:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/1» ծածկագրով ընթացակարգը չի կայացել համաձայն Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Գ. Տերյան)

4.1 19.01.2021թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 1-ին և 3-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «Մոսէքսը» ՍՊԸ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «Մաժէվ» ՍՊԸ և վերջիններիս, անգործության ժամկետի ավարտից հետո, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

4.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել « ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Գ. Տերյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Ա. Ասատրյան

Գնահատող Գ. Ոխտյան

Գնահատող Ա. Առաքելյան

Գնահատող Ա. Կարապետյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան